

**Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորի եզրակացություն**

Իրավաբանների հայկական ասոցիացիա ՀԿ

31 դեկտեմբերի 2017թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Գործունեության մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

Իրավաբանների

հայկական ասոցիացիա ՀԿ-ի Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Իրավաբանների հայկական ասոցիացիա ՀԿ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «*Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի*» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները չեն ենթարկվել աուդիտի:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և Ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

23 ապրիլի 2020թ.



Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չարված)
<i>Ակտիվներ</i>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	229,702	251,031
Ոչ նյութական ակտիվներ		281	-
Ներդրումներ կապակցված կազմակերպություններում		13	13
		<u>229,996</u>	<u>251,044</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
<i>Պաշարներ</i>			
Դեբիտորական պարտքեր	6	30,668	1,872
Մնացորդներ բանկերում		61,815	240,405
		<u>92,584</u>	<u>242,277</u>
Ընդամենը ակտիվներ		<u>322,580</u>	<u>493,321</u>
<i>Պարտավորություններ և զուտ ակտիվներ</i>			
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Հետաձգված հարկային պարտավորություններ	5	41,601	46,563
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	21,976	18,215
		<u>63,577</u>	<u>64,778</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
<i>Կրեդիտորական պարտքեր</i>			
Վարկեր և փոխառություններ	8	3,944	3,803
Հետաձգված եկամուտ	9	88,653	211,499
		<u>92,597</u>	<u>240,824</u>
<i>Զուտ ակտիվներ</i>			
Կուտակված արդյունք		(19,847)	1,466
Վերազնահատման պահուստ		186,253	186,253
		<u>166,406</u>	<u>187,719</u>
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		<u>322,580</u>	<u>493,321</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. ապրիլի 23-ին:

Կարեն Զադոյան

Սամվել Դանիելյան

Նախագահ

Հաշվապահական և խորհրդատվական ծառայությունների
ղեկավար, Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների
բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Գործունեության մասին հաշվետվություն

Հազար դրամ		2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (աուդիտ չարված)
	Ծանոթ.		
<i>Եկամուտ</i>			
Շնորհներից եկամուտ	10	174,536	117,386
Անդամավճարներ		192	152
Այլ եկամուտ		4,023	1,447
Ընդամենը եկամուտ		178,751	118,985
<i>Ծախսեր</i>			
Հատուցումներ աշխատակիցներին		(99,581)	(74,757)
Դրամաշնորհ		(77,249)	(5,438)
Մաշվածություն և ամորտիզացիա		(30,845)	(16,147)
Ծրագրի սպասարկման ծախսեր		(1,147)	(1,105)
Կոմունալ և կապի գծով ծախսեր		(4,159)	(6,055)
Գրասենյակային ծախսեր		(2,138)	(17,031)
Այլ ծախսեր		(1,845)	(601)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)		11,938	1,006
Արդյունք մինչև հարկերը		(205,026)	(120,128)
		(26,275)	(1,143)
Շահութահարկի գծով փոխհատուցում	11	4,962	-
Տարվա արդյունք		(21,313)	(1,143)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հիմնական միջոցների վերագնահատում		-	232,816
Կապակցված հարկեր		-	(16,563)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք, առանց հարկերի			186,253
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական օգուտ/(վնաս)		(21,313)	185,110

Գործունեության մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Վերագնահատման պահուստ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	-	2,609	2,609
Տարվա արդյունք (աուդիտ չարված)	-	(1,143)	(1,143)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք (աուդիտ չարված)	186,253	-	186,253
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չարված)	186,253	1,466	187,719
Տարվա արդյունք	-	(21,313)	(21,313)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	186,253	(19,847)	166,406

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (աուդիտ չարված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք մինչև հարկերը	(26,275)	(1,143)
<i>Ճշգրտումներ¹</i>		
Շնորհներից եկամուտ	(174,536)	(117,386)
Մաշվածություն և ամորտիզացիա	30,845	16,147
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից վնաս	1,580	-
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(11,938)	(1,006)
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(180,324)	(103,388)
Պաշարների փոփոխություն	(101)	254
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(28,797)	5,885
Կրեդիտորական պարտքերի փոփոխություն	141	3,373
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(209,081)	(93,876)
Շնորհներից ստացված դրամական միջոցներ	55,451	309,458
Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ	(153,630)	215,582
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(11,376)	(10,549)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զույր դրամական միջոցներ	(11,376)	(10,549)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառություններից մուտքեր/(մարում)	(25,522)	20,017
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զույր դրամական միջոցներ	(25,522)	20,017
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(190,528)	225,050
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	11,938	1,006
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	240,405	14,349
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	61,815	240,405

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն («Ընկերություն») բարեգործական հասարակական կազմակերպություն է, որը հիմնված է Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կոլեգիայի 1997թ. մայիսի 13-ին թվագրված թիվ 03Ա 060677 որոշման համաձայն: Կազմակերպությունը 1995թ. մարտի 14-ին ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի թիվ 12/2-2 որոշմամբ գրանցված Իրավաբանների միության և 1999թ. դեկտեմբերի 13-ին ՀՀ արդարադատության նախարարի թիվ 2031 հրամանով վերագրանցված «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության իրավահաջորդն է:

Ընկերության գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների, միջազգային պայմանագրերի և սույն Կանոնադրության համաձայն:

Ընկերության հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների վարման քաղաքականությունը կարգավորվում է ԵՄ կիրառելի ուղեցույցների և Հայաստանի նորմատիվ ակտերի համաձայն (հաշվապահական հաշվառման հաշվեգրման մեթոդ և տարեկան նորմատիվ հաշվետվություններ):

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի առաքելությունն է.

- բարձր որակավորում ունեցող իրավաբանների նոր սերնդի ձևավորում,
- ժամանակակից աշխարհայացքի և բարոյական արժեքների առկայություն:
- հասարակության մեջ իրավունքի գերակայության հաստատման և իրավական մշակույթի ձևավորման աջակցություն:

Կազմակերպության արժեքներն են.

- Հայկական բազմադարյա արժեքների ժառանգության վրա հիմնված ժամանակակից իրավական մշակույթ,
- Իրավաբանորեն կրթված հասարակություն, որը գիտակցում է իր իրավունքները:
- Պաշտպանել մարդու իրավունքները:
- Բարձրակարգ իրավաբաններ և փաստաբաններ, որոնք տիրապետում են նոր և ժամանակակից մեթոդաբանությանը:
- Հզոր և ուժեղ քաղաքացիական հասարակություն:

Ընկերության գլխավոր գրասենյակը գտնվում է Նալբանդյան փողոց 7, ք. Երևան, ՀՀ:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 13 մարդ:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՄ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՄ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՄ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ հիմնական միջոցների, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքներով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է Ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության Ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՄ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 12-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընկերության ընդունել է իր գործունեության համար կիրառելի և ժամանակաշրջանի համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 484.10 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 580.10 ՀՀ դրամ (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 483.94 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 512.20 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները, որոնք օգտագործվում են վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որը իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է զուտ ակտիվներում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է տարվա արդյունքում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է արդյունքում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված արդյունքում Ընկերության կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ: Կուտակված արդյունքում ճանաչված վերագնահատումից աճը իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված արդյունքին:

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է

տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- | | |
|------------------------|--------------|
| Շենքեր և շինություններ | - 20 տարի |
| Այլ | - 1-10 տարի: |

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ

համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են հումքի, կամ նյութի ձևով՝ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրելի ծախսումները, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրելի ծախսումները, և չեն ճանաչվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնք արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնք արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Վաճառքի համար պահվող ակտիվների վաճառքից կամ վերագնահատումից առաջացած արդյունքը ճանաչվում է տարվա արդյունքում՝ համապատասխանաբար «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածներում: Վաճառքի դեպքում տվյալ ակտիվի գծով պահուստներում առկա վերագնահատման պահուստը վերագրվում է կուտակված արդյունքին:

3.8 Պահուստներ

Կուտակված արդյունքը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը, ինչպես նաև հիմնական միջոցների վերագնահատման պահուստը:

3.9 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Դոնորների կողմից անվերապահորեն ստացված դրամաշնորհները ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում են տարվա արդյունքում, երբ դառնում են ստացման ենթակա:

Ստացված շնորհների գծով ամբողջ եկամուտը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ, երբ այն դառնում է ստացման ենթակա, այսինքն՝ այն պահին, երբ Ընկերությունը ստորագրում է իրավական պայմանագիր: Հետաձգված եկամուտը փոխանցվում է գործունեության մասին հաշվետվություն՝ շնորհին կից պայմանների իրականացմանը զուգընթաց: Ընդ որում, եթե հետաձգված եկամտի գումարը գերազանցում է Ընկերության կողմից շնորհին կից պայմանների իրականացման համար պահանջվող գումարը, գերազանցող մասը նվազեցվում է հետաձգված եկամտի մնացորդից և համապատասխան դոնորի գծով դեբիտորական պարտքի մնացորդից: Այս ճշգրտման գումարը չի արտացոլվում գործունեության մասին հաշվետվությունում:

Եթե ճանաչված դրամաշնորհի գումարը գերազանցում է Ընկերության ծախսերը, որոնք անհրաժեշտ են ամբողջ դրամաշնորհի իրականացման համար, ապա գերազանցված գումարը նվազեցվում է ճանաչված հետաձգված եկամտի և դրամաշնորհների գծով դեբիտորական պարտքի գումարից:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո

տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունը ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.12 Եկամուտ

Եկամուտը ձևավորվում է հիմնականում դրամաշնորհներից և անդամավճարներից:

Դրամաշնորհներից ստացված եկամտի հաշվապահական հաշվառման քաղաքականության համար տե՛ս ծանոթագրություն 3.9: Անդամավճարներից ստացված եկամուտը ճանաչվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում, երբ Ընկերությունը ստանում է այդ վճարների իրավունքը:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր և շինություն- ներ	Տրանսպոր- տային միջոցներ և սարքա- վորումներ	Տնտեսա- կան գույք և այլն	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք կամ վերագնահատված արժեք</i>				
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	43,454	55,568	33,367	132,389
Ավելացում (աուդիտ չարված)	-	10,549	-	10,549
Օտարում (աուդիտ չարված)	-	(1,896)	(9,702)	(11,598)
Վերագնահատում (աուդիտ չարված)	674,243	36,292	9,677	720,212
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չարված)	717,697	100,513	33,342	851,552
Ավելացում	-	3,800	7,268	11,068
Օտարում	-	(7,820)		(7,820)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	717,697	96,493	40,610	854,800
<i>Կուրսաված մաշվածություն և արժեզրկում</i>				
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	28,349	47,629	32,598	108,576
Տարվա հաշվարկ (աուդիտ չարված)	2,205	13,257	685	16,147
Օտարման հետևանքով դուրսգրում (աուդիտ չարված)	-	(1,896)	(9,702)	(11,598)
Վերագնահատում (աուդիտ չարված)	481,945	4,801	650	487,396
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չարված)	512,499	63,791	24,231	600,521
Տարվա հաշվարկ	10,274	17,026	3,517	30,817
Օտարման հետևանքով դուրսգրում		(6,240)		(6,240)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	522,773	74,577	27,748	625,098
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չարված)	205,198	36,722	9,111	251,031
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	194,924	21,916	12,862	229,702

5 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2017թ.	2016թ. (աուդիտ չարված)
Տարեսկզբի մնացորդ	46,563	-
Տարվա արդյունքում ճանաչված փոխհատուցում (տե՛ս ծանոթագրություն 11)	(4,962)	-
Դեբետագրված այլ համապարփակ ֆինանսական արդյունքին	-	46,563
Տարեվերջի մնացորդ	41,601	46,563

6 Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չարված)
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Դրամաշնորհների գծով դեբիտորական պարտքեր	-	6
Այլ դեբիտորական պարտքեր	25	1,861
	25	1,867
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	30,327	-
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	316	5
	30,643	5
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	30,668	1,872

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Տե՛ս ծանոթագրություն 14՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

7 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2017թ.	2016թ. (աուդիտ չարված)
Տարեսկզբի մնացորդ	18,215	24,194
Եկամտին վերաբերող շնորհներից փոխանցում	9,796	10,549
Մնացորդի ճշգրտում	-	(10,279)
Ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 10)	(6,035)	(6,249)
Տարեվերջի մնացորդ	21,976	18,215

Ընկերության բոլոր ակտիվները ձեռք են բերվել դրամաշնորհային միջոցներով:

8 Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չարված)
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,162	4
Պետական բյուջեին վճարվելիք կրեդիտորական պարտքեր	1,752	1,791
Այլ	30	2,008
	<u>3,944</u>	<u>3,803</u>

Ընկերության արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 14-ում:

9 Հետաձգված եկամուտ

Հազար դրամ	2017թ.	2016թ. (աուդիտ չարված)
Տարեսկզբի մնացորդ	211,499	13,448
Տարվա ընթացքում ստացված	55,451	309,458
Ակտիվներին վերաբերող շնորհներին փոխանցում	(9,796)	(10,549)
Այլ շարժեր	-	10,279
Ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 10)	(168,501)	(111,137)
Տարեվերջի մնացորդ	<u>88,653</u>	<u>211,499</u>

Ավելացումները ներառում են հետևյալ կազմակերպություններից հաշվեգրված նվիրատվությունները.

Հազար դրամ	2017թ.	2016թ.
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (աուդիտ չարված)
Եվրոպական Միություն	34,591	291,603
Նախագահի աշխատակազմ	-	1,000
Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն	15,089	6,200
Տեղեկատվության ազատություն	-	1,588
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն	-	8,449
Մշակույթների ինտեգրման և առաջընթացի ասոցիացիա	1,274	-
«ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիայի»	993	-
Հայաստանի համայնքների միություն	917	-
Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ	1,035	-
Ազորա Կենտրոնական Եվրոպա	901	-
Իրավաբանների հայկական ասոցիացիա ՀԿ-ի անդամներ	651	618
	<u>55,451</u>	<u>309,458</u>

10 Շնորհներից եկամուտ

Հազար դրամ	2017թ.	2016թ.
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (աուդիտ չարված)
Ակտիվներին վերաբերող շնորհներ	6,035	6,249
Եկամտին վերաբերող շնորհներ	168,501	111,137
	<u>174,536</u>	<u>117,386</u>

11 Շահութահարկի գծով փոխհատուցում

Հազար դրամ	2017թ.	2016թ.
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (աուդիտ չարված)
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթագրություն 5)	(4,962)	-
	<u>(4,962)</u>	<u>-</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի		2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (աուդիտ չարված)	
	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(26,275)		(1,143)	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2016թ.՝ 20%)	(5,255)	20.0	(229)	20.0
Զնվազեցվող ծախսեր, զուտ	293	(1.1)	229	(20.0)
Շահութահարկի գծով փոխհատուցում	(4,962)	18.9	-	-

12 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

12.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Ծնորհների ճանաչում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 3.9-ում՝ շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է: Յուրաքանչյուր դրամաշնորհային պայմանագրի համար, Ընկերությունը գնահատում է, թե որքանով է հավանական, որ այն ամբողջովին կբավարարի դրամաշնորհին կցված պայմանները և շնորհը ամբողջովին կստանա: Նման գնահատում կատարելիս ղեկավարությունը հիմնվում է այդ և դոնորի հետ ունեցած նախկին փորձի, նման դրամաշնորհներն ամբողջովին իրականացնելու Ընկերության հնարավորությանը: Եթե ղեկավարության գնահատմամբ Ընկերությունն ի վիճակի է բավարարելու դրամաշնորհին կից պայմանները և դոնորը պատրաստ է ամբողջովին Ընկերությանը փոխանցել դրամաշնորհով նախատեսված գումարները, ապա Ընկերությունը նման դրամաշնորհն անմիջապես ճանաչում է:

Ֆինանսական հաշվետվություններում (որպես ստացվելիք դրամաշնորհներ և հետաձգված եկամուտ)՝ այդ դրամաշնորհի պայմանագիրը կնքելու պահին: Այնուամենայնիվ, եթե ղեկավարությունը սխալվի իր գնահատումներում, ապա կառաջանա ֆինանսական հաշվետվությունները ճշգրտելու անհրաժեշտությունը և այդ ճշգրտումները կարող են էական լինել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաճումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

13 Ֆինանսական գործիքներ

13.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

13.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

<i>Հազար դրամ</i>	<i>2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</i>	<i>2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չսրված)</i>
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ (համաձայն ՀՀՄՍ 39-ի)</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	25	1,867
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	61,815	240,405
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	61,840	242,272

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չարված)
<i>Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,192	2,012
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	2,192	2,012

14 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չարված), քանի որ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների էական մնացորդներ:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության դրամաշնորհներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացուցված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հողված

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Մնացորդներ բանկում	-	33
	-	33
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Կրեդիտորական պարտքեր	-	-
	-	-
Զուտ արդյունք	-	33

Հողված

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չանցած)	ԱՄՆ դոլար	Եվրո
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Մնացորդներ բանկում	-	232,881
	-	232,881
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Կրեդիտորական պարտքեր	56	15
	56	15
Զուտ արդյունք	(56)	232,866

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2016թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2017թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2016թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ 10%-ով (2016թ.՝ 10% (աուդիտ չանցած)) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	Եվրոյի ազդեցություն	
	2017թ.	2016թ.
Տարվա արդյունք	-	23,287
	-	23,287

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

գ) *Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր

իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը (ներառյալ դոնորների կողմից ստացված դրամաշնորհները), մասնավորապես՝ դրամական միջոցները: Ընկերության դրամական միջոցները գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

15 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

15.1 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Ընկերության շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով: Շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Այս ակտիվների իրական արժեքները գնահատվում են՝ հիմք ընդունելով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների գնահատականները, որոնք ունեն անհրաժեշտ արտոնագրեր: Զգալի փոփոխականները և ենթադրությունները մշակվել են ղեկավարության հետ սերտ համագործակցության պայմաններում: Հետագա տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

Շենքեր

Գրասենյակային շենքերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով եկամտի մոտեցումը, որը կապիտալացնում է գնահատված վարձակալական եկամտի հոսքը՝ հանած պլանավորված գործառնական ծախսերը՝ օգտագործելով շուկայական եկամտաբերությունից ստացված զեղչման տոկոսադրույքը, որը որոշվում է՝ ելնելով նմանատիպ գույքի հետ կապված վերջին գործարքներից: Երբ փաստացի վարձավճարն էականորեն տարբերվում է գնահատված վարձավճարից, նշանակում է՝ գնահատված վարձակալական արժեքում ճշգրտումներ են կատարվել: Գնահատված վարձակալական եկամտի հոսքը դիտարկելիս հաշվի են առնվում շենքի զբաղեցված լինելու ներկայիս մակարդակը, չբաղեցված տարածքների ապագա մակարդակի գնահատումները, վարձակալության ժամկետները և շենքի մնացորդային տնտեսական ծառայության ընթացքում ապագա վարձակալություններից ակնկալվող վարձակալական եկամուտները: Գրասենյակային շենքերը վերագնահատվել են 2017թ. հունվարի 1-ին:

16 Պայմանականություններ

16.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

16.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

17 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության խորհրդի անդամներին և նախագահին ընկերությանը:

17.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (աուդիտ չարված)
Գործարքներ		
Աշխատավարձ և պարգևատրումներ	32,626	20,340
Փոխառությունների մարում	10,675	-
Տրված փոխառություններ	1,533	3,637
	44,834	23,977
Հազար դրամ		
Մնացորդներ		
Աշխատակիցների փոխհատուցումների գծով պարտավորություն	-	-
	-	-